





Նկար 1
Եղիշե Թադէոսեանի լուսանկարը

■ Եղիշե Թադէոսեանի էտիւդիների ցուցահանդէսը ■

— III —

Ներկայ տարուայ յունիսին Երեւանի Պետական Թանգարանում ցուցադրուած էր նկարիչ Եղիշե Թադէոսեանի քառասնամեայ նկարչական գործունէութեան էտիւդների ժողովածուն, ոչ լրիւ նորա կատարած բոլոր էտիւդների, բայց մի պատկառելի թիւ, 450 կտորից բաղկացած։ Սա մի եզակի երեւոյթ էր վերջին տասնեակ տարիների մէջ Հայաստանում եղած

ցուցահանդէսների շարքում. որովհետեւ սովորական չէ նկարիչների կողմից ցուցադրել իրենց «ինտիմ» ուսումնասիրութիւնները բնութեան եւ առհասարակ նկարելիք իրերի եւ անձանց, որոնք նախապատրաստական նշանակութիւն ունին ապագայ մեծ գործերի համար։ Երեւանի Թանգարանի վարչութիւնն ու մի խումբ երիտասարդ նկարիչներ գիմել էին մեր արուեստագէտին, որպէս



Նկար 2


Ե. Թադևոսեան .— Փողոց Պախչի-Սարայում

Նկարչութեան երկարամեայ վարժապետի եւ վարպետի այդ զիջողութիւնն անել, եւ ցուցադրել իւր հարուստ ժողովածուն, որ մանկավարժական եւ արուեստի տեսակէտներով շատ ուսանելի եւ քննելի կողմեր ունէր:

Եղիշէ Թադէոսեանը (նկար 1) մէկն է մեր արդի նշանաւոր հայ նկարիչներից. նորա մասին այլ առթիւ մի համառօտ գնահատական ենք գրել Տ. Արտաւազդ Եպիսկոպոսի Տաքել տարեցոյցի (1930 թ.) մէջ. այժմ ներկայ ցուցահանդիսով հնարաւորութիւն ունինք նորա տաղանդը գնահատելու բոլորովին այլ կողմերով եւ չափանիշերով, քան կարելի էր այդ անել նորա պատրաստ նկարներով, որ մատչելի էին դարձած, զլիաւորապէս կերպարուեստական գոր-

ծերով: Այս ցուցահանդէսը արուեստագէտի, գրեթէ, ամբողջական կենսագրականն է, նորա կեանքի ուղեգիծը, որոնումների եւ աստիճանական զարգացման ընթացքը դէպի իւր արուեստի բարձունքները: Ոչ մի գրաւոր աշխատութիւն ու մեկնութիւն (էնթէրքրէքսիոն) չի կարող այնպէս պայծառ եւ ցայտուն գաղափար տալ արուեստագէտի զարգացման ճանապարհի մասին, քան տալիս է այս էտիւդների ժամանակագրական դասաւորումն ինքնըստինքեան:

Այստեղ մենք տեսնում ենք նորա պատանեկութեան եւ աշակերտական վարժութեան փորձերը, նկարչական դպրոցների եւ ուսուցիչների ազդեցութիւնները եւ թէ ինչպէս նորան ի վերուստ շնորհուած տաղանդը փթթում է կամաց կամաց, իւրայատուկ ձեւակերպութիւններ ու գունաւորումներ ստանում, անհատական դրոշմը գերիշխող եւ շօշափելի դառնալով հետզհետէ: Մոսկուայի Գեղարուեստական դպրոցի նկարիչ պրոֆեսորներից ամենից աւելի մեծ ազդեցութիւն է ունեցել մեր նկարչի վերայ Պալենովը, նշանաւոր հանդիսացած իւր պաղեստինեան ճանապարհորդութեամբ եւ Յիսուսի կեանքի պատ-



Նկար 3

Ե. Թադէոսեան .— Վեներիկ . Զրանցք եւ կոնտոլ



Նկար 4

Ե. Թադէոսեան. — Արուեստագէտի ինքնանկարը

կերների շարքով, իսկ Պալենովը Չիստիակովի աշակերտն էր, Ռէպինի, Սէրովի, Վրուբելի, Աստրաուխովի, Մուսուտովի եւն. աշակերտակիցը. սրանք անցեալ դարի երկրորդ կիսում Ռուսաստանի գեղարուեստական աշխարհի փառքն էին կազմում, իրենց ուսուցչի մանկավարժական ընդունակութիւնների եւ հմտութեան ակներեւ ապացոյցը։ Նոյն մեթոդները եւ անհատական յարաբերութեան ձեւերը իւրացրել էր եւ Պալենովը. Եղիշէ Թադէոսեանը վաղելել է իւր ուսուցչի խնամքն ու սերտ բարեկամութիւնը մինչեւ նորա մահը։

Նկարիչը իւր երիտասարդութեան առաջին ուսումնասիրական ճանապարհորդութիւնը կատարել է Ղրիմում, այցելելով խաների հին պազարը Բախչի — սարայում, որ ուշադրութեան արժանի

մի մնացորդ է մահմեդական արուեստի (պատկ. 2)։ Այնուհետեւ գնացել է Նաֆրանսիա, Իտալիա, Անգլիա, Իսպանիա, ծանօթանալով այդ ազգերի դասական խոշոր արուեստագէտների գործերի հետ, մի եւ նոյն ժամանակ էտիւդներ կատարելով բնութիւնից։ Բայց նորա արուեստի վերայ զգալի դրոշմ են թողել արեւելքում, այսինքն Կ. Պոլիս, Պաղեստին, Եգիպտոս կատարած ճանապարհորդութիւնները իւր ուսուցիչ Պալենովի հետ միասին։ Այս ճանապարհորդութիւնը միանգամայն համապատասխան էր կեդրոնական Հայաստանի մի զաւակի համար, որ մանկութիւնից ճաշակել էր Արարատեան դաշտի մեծ գեղեցկութիւնը, չըջապատող լեռների գունազեղ պանորաման, իրենց բազմատեսակ գոյների եւ նրանց նուրբ նիւանսների շղարշներով, որ հագնում են տարուայ եղանակների եւ օրուան ժամերին համեմատ։ Կախարդական եւ հէքեաթային բնութիւնը անդրադարձել է նորա էտիւդների մէջ Արեւելքում եւ մանաւանդ Հայաստանում կատարած ճանապարհորդութիւնների ժամանակ։

էտիւդների այս մեծ ժողովածուի մէջ նկարիչը երեւան է գալիս իւր տաղանդի բազմակողմանի յատկութիւններով. կերպարուեստի հետ, որով մինչեւ այժմ աւելի յայտնի էր գեղարուեստասէր հասարակութեան, աչքի է ընկնում այստեղ առաւելապէս իրրեւ նշանաւոր պէյզաժիստ, բայց եւ ծովանկար, ինչպէս Վենետիկեան ջրանցքի էտիւդներն են, չէնքերի սքանչելի անդրադարձումներով ջրի մէջ (նկար 3)։ Բնութեան հատուածները կամ երեւոյթները, որ գրաւել են նկարչի ուշադրութիւնը, ենթարկուած են այս էտիւդների մէջ բազմակերպ վերաբերմունքի եւ ուսումնասիրութեան. երբեմն մանրադնին եւ ձեւական նկատառութեամբ մինչեւ լուսանկարչական ճշգրտութիւն, երբեմն անցո-



Նկար 5

Ե. Թադևոսեան. — Ընկողմանած կինը

ղակի տպաւորութիւն վրձինի արագ շարժմամբ, երբեմն գուտ տեխնիքական նպատակներով խնդրին մօտեցած, բայց եւ շատ յաճախ փոքրիկ կտաւի վերայ երեւան են գալիս արուեստագէտի ամբողջական գործեր: Բանը կտաւի մեծութեան մէջ չէ, այլ գեղարուեստական վերարտադրութեան, որակի. այդ տեսակէտով բազմաթիւ են այդպիսի արժէքաւոր կտորներն այստեղ, որ կարելի կլինէր իւր եւ ուրիշ նկարիչների լաւագոյն գործերի շարքում տեղաւորել: Այդպիսի մի գործ է նկարչի ինքնապատկերը, վրձինը ձեռքին, միտքն ու աչքերը ուղղած դէպի նկարելիքը, արուեստագէտի ստեղծագործութեան բուսական, ապրումը, որ աւելի կեդրոնացած

է կարմիր լուսով (պատկ. 4): Պակաս գեղեցիկ չէ ընկողմանած կինը (պատկ. 5), պայծառ, լուսաւոր կենսալից եւ զուարթ, ինչպէս գարունը: Վենետիկ ջրանցքի մասին, անդրադարձած տներով, խօսք եղաւ վերը. նոյն դասին է պատկանում Էջմիածնի Լիճը ծառերի արտացոլացմամբ. պատկերը կենդանացել է եւ աւելի խորհրդաւորութիւն ստացել ամիսն նստած եւ տեսարանով յափշտակուած երիտասարդի սիւրւետով, որ Սողոմոն սարկաւազն է, մեր չապազայ, տարարազդ կոմիտաս Վարդապետը: Դաշտանկարի գեղեցկագոյն մի գործ է Հրազդանը՝ Երեւանի Առաջնորդարանի պատշգամբից, ամիսին փռուած ճոխ եւ երփներանգ բուսական



Նկար 6

Ե. Թադևոսեան — Էջմիածնի Լիճը

նութեամբ եւ դաշտով մինչեւ հեռաւոր հորիզոնի սահմաններում մշուշի մէջ նիրհող Մասիսը իւր գազաթներով (պատկ. 7)։ Տարբեր գեղեցկութիւն է Արարատը աշնան ժամանակ (պտկ. 8)։ Սրանք եւ սրանց հետ շատերը խորապէս տպաւորիչ են եւ բանաստեղծական։ Մեր նկարիչն առհասարակ գոյների վարպետ է, զուարթ բնութեան, պայծառ գոյների, լուսոյ եւ կենսայից ձեւերի երգիչ իւր բազմաթիւ դաշտանկարների եւ Ֆիգուրատիւ ստեղծագործութիւնների մէջ։

Ահա հակիրճ խօսքերով այս ցուցահանդիսի արժէքը գեղարուեստական նկարչութեան եւ մանկավարժութեան տեսակէտներով, մանաւանդ երիտասարդ եւ սկսնակ արուեստագէտների համար. այստեղ իրենց աչքի առաջ մի կենդանի օրինակ ունին, թէ կատարե-


լութեան բարձունքներին հասնելու համար՝ բացի տաղանդից անհրաժեշտ են նաեւ տոկուն եւ յարատեւ աշխատանքը, տեխնիկայի տիրապետութիւնը եւ սէրը դէպի գործը, որ անդադրում եռանդի աղբիւր է դառնում։ Հասկանալի է, թէ ինչո՞ւ մեր արուեստագէտը խնամքով հաւաքել է եւ պահում է իւր էտիւդների այս ժողովածուն, չկամենալով ցրուել կամ վաճառել. որովհետեւ նրանց վերայ նայում է իրրեւ մի կենդանի աղբիւրի վերայ, որից սնունդ են ստացել նորա ստեղծագործութիւնները եւ պիտի ստանան նաեւ ապագայում։

Հիացմունքի տպաւորութեամբ է բաժանում այցելուն այս ցուցահանդիսից, բայց մի եւ նոյն ժամանակ ամսօրնային, ու ծանօթ է նկարչի կեանքին, որ այս բազմակողմանի եւ բեղմնաւոր տաղանդը իւր երիտասարդութեան



Նկար 7

Ե. Թադէոսեան.- Հրազդանը Երեւանում



Նկար 8


Ե. Թադէոսեան.- Արարատը աշնան

տասնեակ, լաւագոյն տարիներն ստիպուած է եղել դասատու լինել դպրոցներում մի կտոր հացի համար, ամառուայ արձակուրդներին միայն հնարաւորութիւն ունենալով նուիրուիլ իւր արուեստին: Այժմ, երբ ազատ է նա այս յոգնեցուցիչ պաշտօնից, յուսանք, թէ յարմարութիւն կստեղծուի իւր կեանքի

մնացորդը, դեռ եւս թարմ եւ ստեղծագործական աւիւնով լի, ամբողջապէս նուիրելու իւր արուեստին, որից դեռ չատ սպասելիքներ ունինք:

ԿԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՍ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Յուլիս, 1934 թ., Էջմիածին



Ն. Թադեոսեան .— « Ս . Մեարոյ »
 (Կը գտնուի Էջմիածին, Գարեֆին Արք.ի մօտ)